Հավելված N 2
2024 թվականի փետրվարի 07-ին կնքված
«ԴՏՊ-11414-11018/24» ՍՕՍՏ պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 4**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Միջոցառման անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագիր |
| **Դրամաշնորհի N** | «ԴՏՊ-11414-11018/24» ՍՕՍՏ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ |
| **Միջոցառման իրականացման ժամանակահատված** | Հունվար - դեկտեմբեր 2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | Հոկտեմբեր-դեկտեմբեր 2024 |
| **Ներկայացման օր** | 13.12.2024թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Հայկուհի Ղալումյան, ծրագրի համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

1. Ապահովել երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում, այդ թվում՝ խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայությունների տրամադրում, մասնագիտական կողմնորոշում, արտթերապիա (ծառայությունը նպաստում է երեխայի հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը, վեր է հանում ուժեղ և թույլ կողմերը և այլն), անձի զարգացմանն ուղղված ծառայությունների տրամադրում (քաղաքացիական կրթության, մեդիագրագիտության և այլ խմբակների միջոցով)
2. Ապահովել սոցիալական աշխատանք ընտանիքի հետ՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների, այդ թվում ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով
3. Ապահովել սոցիալական աշխատանք երեխային շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպության հետ
4. Տրամադրել առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվական-տեղեկատվական և ուղղորդման ծառայություններ
5. Տրամադրել ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթ
6. Կազմակերպել երեխաների և ծնողների հետ երեխայի իրավունքների, ծնողավարության հմտությունների, ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ դասընթացներ
7. Տրամադրել հնարավորություն շահառուներին՝ ծառայության որակն անանուն գնահատելու և առաջարկություններ ստանալու համար՝ արդյունքները ներառելով եռամսյակային հաշվետվություններում:
8. Տրամադրել առնվազն մեկ շահառուի անձնական օգնականի ծառայություն՝ ելնելով տվյալ երեխայի կարիքներից

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

1. Հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում 18 երեխայի մատուցվել է անհատական հոգեբանական ծառայություն՝ հուզական, հաղորդակցման, վարքային, ցածր ինքնագնահատականի, խմբում ներառվելու խնդիրների, տագնապի սքրինինգի և դրա արտահայտվածության, ինչպես նաև վախերի բացահայտման և հաղթահարման նպատակով: Իրականացված աշխատանքները նպաստել են երեխաների ինքնավստահության, ինքնագնահատականի բարձրացման, խմբում ազատ ինքնադրսևորվելու, հուզական ֆոնի կայունացման միջանձնային ճիշտ հարաբերությունների կառուցմանը:

Եռամսյակի ընթացքում իրականացվել են նաև անհատական և խմբային լոգոպեդական պարապմունքներ 16 երեխաների հետ, որոնք ուղղված են եղել տարբեր խոսքային խնդիրների հաղթահարմանը (ԽԸԹ, դիսլալիա, միջատամնային սիգմատիզմ՝ ս,զ,ձ,ծ,ց սուլական հնչյունների սխալ արտաբերում, ռինոլալիա): Լոգոպեդական պարապմունքների ընթացքում իրականացվել է հնչարտաբերման շտկում, հնչյունադրում, խթանվել է երեխաների խոսքային և հնչյունային ակտիվությունը, զարգացվել է խոսքի ընկալումը: Ստեղծվել են պայմաններ հնչյունամիացությունների և ձայնանմանակումների խթանման համար: Աշխատանքներ են տարվել լսողական ընկալման զարգացման, պասիվ բառապաշարի ակտիվացման և հարստացման ուղղությամբ: Առանձնակի ուշադրություն է դարձվել արտաբերական և շնչառական վարժությունների ճիշտ կատարմանը:

Նշված հաշվետու ժամանակահատվածում 91 երեխայի հետ իրականացվել են խմբային հոգեբանական աշխատանքներ, որոնք ուղղված են եղել

- Երեխաների մոտ առկա տագնապայնության աստիճանի բացահայտմանը «Բեկի տագնապայնության սանդղակ»

- Միջնորդավորված մտապահման կարողության ստուգմանը « Պիկտոգրամմա»
- Բացասական հույզերից ազատում, ագրեսիայի թուլացում

«Բեկի տագնապայնության սանդղակ»-ը նախատեսված է տագնապի սքրինինգի և դրա արտահայտվածության աստիճանի գնահատման համար: Հարցարանը բաղկացած է 21 կետից, որն իր մեջ ներառում է երեք մակարդակ՝ տագնապի աննշան աստիճան կամ բացակայություն, տագնապի միջին աստիճան, տագնապայնության բարձր մակարդակ: Յուրաքանչյուր կետ ներառում է տագնապին բնորոշ ախտանիշներից մեկը՝ մարմնային կամ հոգեբանական: Բեկի տագնապի սանդղակն իրենից ներկայացնում է պարզ, հարմար գործիք երեխաների լայն շրջանակի մոտ տագնապային խանգարումների աստիճանի գնահատման համար: Մեթոդի իրականացմանը մասնակցել են 37 երեխա, որոնցից 20-ի մոտ առկա էր տագնապի բացակայություն, 11- ի մոտ՝ տագնապի միջին աստիճան, և 2 երեխայի մոտ՝ տագնապի բարձր աստիճան: Տագնապի բարձր աստիճան ունեցող երեխաների, ինչպես նաև նրանց ծնողի հետ անց է կացվել անհատական հոգեբանական խորհրդատվություն: Խորհրդատվություն է անցկացվել նաև միջին ցուցանիշ ձեռք բերած երեխաների հետ:

«Պիկտոգրամմա» առաջադրանքի նպատակն էր ստուգել երեխաների միջնորդավորված մտապահման կարողության մակարդակը: Երեխաների համար ընթերցվել են բառեր՝ ըստ որոշակի հերթականության, 30 վայրկյան ինտերվալով: Յուրաքանչյուր բառից առաջ երեխաները գրել են թիվը և գունավոր մատիտներով նկարել ընթերցված բառն այնպես, որպեսզի որոշ ժամանակ անց կարողանան վերհիշել ընթերցված 10 բառերը և նկարների մոտ գրեն դրանք: Առաջադրանքի կատարմանը մասնակցել են թվով 61 երեխա, որոնցից բարձր մակարդակ (7-10) ապահովել են 33 երեխա, միջին մակարդակ (5-6) ապահովել են 11 երեխա և ցածր մակարդակ ապահովել են 17 երեխա: Երեխաների մոտ ցածր մակարդակի դրսևորումը պայմանվորված է նրանց ուշադրության ցրվածությամբ, տրված առաջադրանքի վրա չկենտրոնանալու կարողությամբ, ինչպես նաև կողմնակի ազդակներից շուտ շեղվելու հատկությամբ:

«Սրտի քարտեզագրում» մեթոդի իրականացման նպատակն էր երեխաներին ազատել բացասական հույզերից, թուլացնել ագրեսիան: Երեխաներին տրվեց թուղթ, գունավոր մատիտներ և առաջարկվեց, որ նրանք նկարեն իրենց սիրտը, այն բաժանեն մասերի, այնուհետև այնտեղ գրեն այն դրականը, որն իրենց մեջ կա: Նրանք կարող էին գրել նաև իրենց երազանքները, ձգտումները և այլն: Վերջում անհրաժեշտ էր ներկել սրտի բոլոր հատվածները: Մեթոդի իրականացմանը մասնակցել են 58 երեխա: Նրանք մեծ հաճույքով և ոգևորվածությամբ գրեցին իրենց ցանկությունները, երազանքները, այն ինչ սիրում են և ուզում են ունենալ: Ավարտելուց հետո տեղի ունեցավ քննարկում, որի արդյունքում պարզվեց, որ երեխաների սրտում շատ դրական բաներ կան, որոնց վրա իրենք ուշադրություն չէին դարձրել: Հասկացան, որ բացասականի փոխարեն կարելի է կենտրոնանալ նաև դրականի վրա, որն ավելի լավն է և հաճելի: Հասկացան, որ շատ են սիրում իրենց ընտանիքի յուրաքանչյուր անդամի, կարևորում են նրանց հետ անցկացրած յուրաքանչյուր պահ: Հասկացան, որ ունեն երազանքներ, որոնք պետք է իրագործել, այդ թվում խաղաղության և Արցախը հետ բերելու մասին:

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային խնամքի ծառայություն ստացող երեխաների ծնողների (18 ծնող) հետ իրականացվել է «Երեխայի որոշ հիմնական սոցիալ-հոգեբանական կարիքներ» թեմայով դասընթաց, որի նպատակն էր խրախուսել ծնողներին, որպեսզի իրենց ճիշտ վերաբերմունքով և մոտեցմամբ կարողանան ապահովել ոչ միայն երեխաների նվազագույն կենսական կարիքները, այլ նաև որոշ հոգեբանական և սոցիալական կարիքներ, ինչպիսիք են ապահովությունը, սերը, հարգանքը, գնահատանքը, ընկալումը և կարեկցանքը:

**2.** «Իջևան» մասնաճյուղի «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագրի անձնակազմի կողմից իրականացված իրազեկման միջոցառումների և երեխաների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, Միասնական սոցիալական ծառայության, բժշկական կենտրոնների, կրթական հաստատությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 4 ընտանիք ուղղորդվել է կենտրոն՝ երեխաներին ցերեկային խնամքում ընդգրկելու նպատակով:

Ծրագրի աշխատակիցներն իրականացրել են նշված ընտանիքների տնայց և կատարել կարիքների առաջնային գնահատում: Տնայցերի ընթացքում ծրագրի սոցիալական աշխատողների և ՄՍԾ սոցիալական աշխատողների հավաքագրած տեղեկատվության, ծնողների և երեխաների հետ զրույցների արդյունքում ԿԴԻՀ 4 ընտանիքի 7 երեխայի համար կազմվել է երեխայի և նրա

ընտանիքի կարիքների գնահատման ձևաթուղթ: Կազմակերպության բազմամասնագիտական թիմի կողմից իրականացվել են վերոնշյալ երեխաների կարիքների գնահատումներ:

Արդյունքում 4 ընտանիքի հետ կազմակերպությունը կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով 7 երեխա ներառվել է ծրագիր կարիքահեն ծառայություններ ստանալու նպատակով: Ծրագրում ներառված երեխաներից 42-ին մատուցվել են արտակենտրոն ծառայություններ, 102-ին մատուցվել են ծառայություններ կենտրոնում:

Հաշվետու ժամանակաշրջանում սոցիալական աշխատողի ուղեկցությամբ 1 ընտանիքի 1 երեխա ստացել է բուժզննում (ականջախեցիների և լսողության ստուգում՝ աուդիոմետրիա) և հիվանդության ախտորոշում Երևանի Արաբկիր բժշկական կենտրոնում, որից հետո կազմվել է եզրակացություն և երեխան ուղղորդվել է հետագա բուժման նպատակով համապատասխան մասնագետի մոտ (LOՌ մասնագետ):

**3.** Շուրջօրյա խնամք իրականացնող հաստատությունների՝ մասնավորապես «Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ, «Գյումրու Մանկան տուն» ՊՈԱԿ, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ համագործակցության շրջանակներում՝ շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների վերամիավորումն իրենց կենսաբանական ընտանիքների հետ ապահովելու նպատակով, սոցիալական աշխատողների կողմից նշված հաստատությունների երեխաների ընտանիքներից հավաքագրված տվյալների հիման վրա նշված երեխաների վերաինտեգրում ընտանիքներ առայժմ հնարավոր չէ, քանի որ երեխաներն ունեն մասնագիտական հատուկ խնամքի, ինչպես նաև շուրջօրյա բժշկական վերահսկողության կարիք, որը ծնողներն ապահովել չեն կարող:

**4.** Երեխաների ընդհանուր զարգացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են տարբեր դասընթացներ և ապահովվել է երեխաների մասնակցությունը հետևյալ խմբակներում.

- 2 երեխա մասնակցել է համակարգչային հմտությունների խմբակին:
- Ազատ ժամանցը, արտադպրոցական զբաղվածությունն ապահովելու համար 1 երեխա հաճախել է գեղարվեստի դպրոց, 2 երեխա՝ երաժշտական դպրոց: Ապահովելով երեխաների մասնակցությունը՝ նպաստել ենք նրանց ներգրավվածությունը սոցիալական միջավայրին, երաժշտական հմտությունների և իմացական ոլորտի զարգացմանը:
- 132 երեխա մասնակցել է «Կյանքի հիմնական հմտություններ» խմբակի, որը կազմակերպվում է յուրաքանչյուր աշխատանքային օր երեխաների տարբեր խմբերի համար: Երեխաները ծանոթանում են այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ «Հաղորդակցման հմտություններ», «Մտորումներ կյանքի մասին», «Ինքնաբացահայտում», «Ինչպիսին եմ ուզում լինել**»,** **«**Ապրումակցում», «Աշխատանքն ու ապագան»:
- Կարևորելով երեխաների ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպը՝ 37 երեխա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին մասնակցել է սպորտի խմբակի: Խմբակի նպատակն է երեխաների մոտ զարգացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքները:
- Երեխաների ընդհանուր զարգացվածությունը բարձրացնելու նպատակով ծրագրի սոցիալական աշխատողի կողմից շուրջ 131 երեխայի համար կազմակերպվել է «Ֆինանսական գրագիտություն» թեմայով դասընթաց, որի նպատակն է երեխաներին օգնել հասկանալ ֆինանսական գրագիտության հիմունքները, հասկանալ, թե ինչ է ներդրումը, ավանդը, հարկերը, վարկերը, բյուջետավորումը, խնայողությունը, բանկինգը, պարտքի կառավարումը, և այլն: Դասընթացի նպատակն է երեխաներին տրամադրել համակարգված տեղեկատվություն առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների, վերաբերյալ՝ նրանց հնարավորություն ընձեռելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում:
- Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին 110 երեխա մասնակցել է անգլերենի խմբակի: Երեխաների մի մասը զարգացրել է իրենց տարրական պատկերացումներն անգլերեն լեզվի մասին, մյուսը մասը զարգացրել է անգլերեն լեզվով շփման և հաղորդակցման հմտությունները:
- 4 երեխա օգտվել է նախադպրոցական կրթությունից՝ մասնակցելով ֆիզկուլտուրայի, խոսքի զարգացման, մաթեմատիկան տարրական պատկերացմամբ, նկարչության, անձի զարգացման, ապլիկացիայի, շրջակա միջավայրի խմբակների:
- 42 երեխա ծրագրի ծառայություններից օգտվել է արտակենտրոն՝ Աչաջուր համայնքում:

- Հաշվետու ժամանակահատվածում 8 շահառու մասնակցել է կազմակերպությունում գործող արտթերապևտիկ (ձեռքի աշխատանք, վիտրաժ) ծառայություններին, որը նպաստել է նրանց հուզական կայունությանը, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը, ինչպես նաև վեր է հանել ուժեղ և թույլ կողմերը:
- Հաշվետու ժամանակահատվածում միջանձնային՝ թեթև վարքային խնդիրներով 7 երեխայի հետ իրականացվել է անհատական հոգեբանական աշխատանք: Ելնելով կարիքներից՝ երեխաները ներառվել են կենտրոնում գործող տարբեր խմբակներում սոցիալականացումը, հասակակիցների հետ շփումն ապահովելու համար: Հաշմանդամություն ունեցող թվով 11 երեխա և կրթության առանձնահատուկ կարիքի պայման ունեցող 19 երեխա ծրագրում շարունակում է ստանալ ինչպես հոգեբանական անհատական ծառայություն, այնպես էլ խմբային ծառայություններ: Հաշմանդամություն ունեցող 3 երեխայի տրամադրվել է անձնական օգնականի ծառայություն: Կազմակերպվել է երեխայի տեղափոխումը երեխայի տնից կենտրոն և հակառակ ուղղությամբ անձնական օգնականի ուղեկցությամբ, իսկ կենտրոնում գտնվելու ընթացքում անձնական օգնականի օգնությամբ կազմակերպվել է երեխայի ներգրավումը կենտրոնում կազմակերպվող ծառայություններին՝ խմբակներին, խաղերին և այլն:

**4.** Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի մանկավարժի կողմից իրականացվել է «Երեխաս ինձ օգնեց հասկալան, որ ես...» թեմայով դասընթաց: Դասընթացին մասնակցել են ցերեկային խնամքի կենտրոնի շահառու 19 ծնող: Դասընթացն անցկացվեց ինտերակտիվ մեթոդով: Ձեռք բերված գիտելիքի գնահատման համար դասընթացի ընթացքում կիրառվեց նախաթեսթի և հետթեսթի մեթոդը: Թեմայի վերաբերյալ ծնողներն ունեին 30% գիտելիք: Թեմայի ավարտին դասընթացի մասնակիցների մոտ արձանագրվեց թեմայի շուրջ գիտելիքի 95% աճ:

**5.** Ծրագրի արդյունավետ իրականացման համար, ծրագրի անձնակազմի կողմից ապահովվել է ընտանիքի և համայնքի շահագրգիռ մարմինների, մասնավորապես Միասնական սոցիալական ծառայության, ինչպես նաև տարբեր հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ:

**6.** 20 ծնողի տրամադրվել է իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայություններ՝ ***«ՀՀ Քաղաքացիական օրենսդրություն և սեփականության իրավունք»*** թեմայով: Հինգ շահառուների տրամադրվել է անհատական փաստաբանական խորհրդատվություն, վեր են հանվել խնդրահարույց իրավիճակներ և տրամադրվել է խորհրդատվություն կարգավորող օրենսդրական դաշտի վերաբերյալ: Դասընթացի ընթացքում կիրառվել է հարց ու պատասխանի մեթոդ թեստերի միջոցով, արդյունքում արձանագրվել է 28% գիտելիքի աճ:

**7.** Ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում երեխաները (միջինում շաբաթական 120-144 երեխա) ապահովվել են անհրաժեշտ սննդով օրական 1 անգամ:

**8.** Շահառուներին տրամադրվել է հնարավորություն ծառայության որակի մասին անանուն գնահատում իրականացնելու: Ըստ գնահատման արդյունքների՝ շահառուների 100% բավարարված է ծրագրի կողմից մատուցած ծառայությունների որակից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

տնտեսական առաջնային պահանջմունքները: Այդ իսկ նպատակով վերոնշյալ ընտանիքները հաշվետու ժամանակահատվածում ապահովվել են ձմեռային հագուստով, սննդի փաթեթներով:

ԿԴԻՀ գյուղաբնակ թվով 30 ընտանիքի 58 երեխա չէր կարողանում օգտվել ծրագրի ծառայություններից բնակության վայրի հեռավորության և տրանսպորտային ծախսերը հոգալ չկարողանալու պատճառով: Կարևորելով նշված երեխաների ներգրավածությունը ծրագրում, ինչպես նաև նրանց սոցիալ-հոգեբանական կարողությունների ու հմտությունների զարգացումը՝ կազմակերպության կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով և ծրագրի մասնագետի ուղեկցությամբ իրականացրել ենք թվով 58 երեխայի այցը կենտրոն և հետ վերադարձը համայնք:

***«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ***

***ազգային տնօրեն*** ***Ս. Մարգսյան***